

ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Մօակ, № 31. Հայ կաթօլիկ համայնքը.—«Յալախի է, որ Կովկասում և Անդրովկասում ապրող հայ-կաթօլիկները ղետեղուած են Քիֆլիսի, Գոթալիսի, Երևանի նահանգներում, նաև Կարսի և Արդուինի շրջանում: Հայ կաթօլիկների պաշտօնական թիւը համարում են 50,000 հոգի (տե՛ս «Քեմակա՛ն օրացոյց», Սարատով 1901 թ.): Հայ կաթօլիկները ունեն երկու հոգեւոր կառավարութիւն.—մէկը Ախալցխայում, միւսը Արդուինում: Այդ հոգեւոր կառավարութիւնները պաշտօնապէս ճանաչուած են կառավարութիւնից որպէս անմիջական հսկող հայ-կաթօլիկների հոգեւոր գործերին, համաձայն աղբայրին սովորութիւնների: Գործածական լեզուն թէ՛ եկեղեցում և թէ՛ հոգեւոր կառավարութիւնների մէջ հայերէնն է:

1877 թուի լուսնուարի 8-ին Ախալցխայում կառավարութեան հրամանով տեղի ունեցած աղբայրին ժողով, որտեղ նախագահում էր Ալէքսանդր Արարատեան, մասնակցում էին ժողովին 68 հոգեւորական և աշխարհական պատգամաւորներ: Ժողովի նպատակն էր. 1) հայ-կաթօլիկների հոգեւոր կառավարութիւնը տեղափոխել Քիֆլիս, որպէս կենտրոն և յարմար տեղ. 2) խնդրամատոյց լինել լաւնալու հայ-կաթօլիկների հոգեւոր ղալրոցը, որտեղ սովորելին մանուկներ ապագայում քահանայ լինելու համար: Ժողովը

պարապմունքները աւարտելուց լետոյ իր ղեկուցումը տուեց կառավարութեան:

1878 թ. լուսնուարի 19-ին գեներալ Կամարովի զօրքերը Արդանուշից մտան Արդուին և այդ օրից Արդուինը իր շրջակայքով միացաւ Ռուսաստանին: Արդուինում ապրում էր եպիսկոպոս Անտօն Հալաճեանը, որ շրկուելով աչքերից, չէր կարող թեմը կառավարել: Հարկաւոր էր նոր եպիսկոպոս ընտրել: Ընտրեցին Յովհաննէս վարդապետ Զաքարեանին: Զաքարիա եպիսկոպոսի իշխանութիւնը սահմանափակում էր միայն Արդուինի թեմով, իսկ Քիֆլիսի, Երևանի նահանգի հայ-կաթօլիկները կրկին ձնացին Սարատովի լատին եպիսկոպոսի իշխանութեան տակ:

Զուրկ լինելով սեփական հայ-կաթօլիկ եպիսկոպոսից, զուրկ էին նաև հոգեւոր ղալրոցից. քահանաները բոլորովին զուրկ էին կարեւոր ուսումից և ո՛րտեղ սովորէին: Հոգեւոր ղալրոց հաստատուելու համար շատ ջանք գործ դրեց հայր Ալէքսանդր Արարատեան: Նրա ցանած սերմը չը կորաւ: 1893 թուի մայիսի 25-ին հրատարակուեց Բարձրագոյն հրաման: Բարձրագոյն Հրովարտակի մէջ հրամայուած էր. 1) հաստատել Քիֆլիսում հայ-կաթօլիկների համար հոգեւոր կառավարութիւն, որ պէտք է բաղկանայ 1 նախագահ անդամից, 3 անդամներից և մէկ

քարտուղարից. որոշուած էին նաև այդ պաշտօնեաների ռոճիկները. 2) բանալ Թիֆլիսում հայ կաթօլիկների հոգևոր սեմինարիա, որտեղ պատանիները պատրաստուեն հոգեւոր կոչման մէջ ծառայելու համար. 3) Միջի փողոցի ու. Աստուածածնի եկեղեցին յանձնել հայ-կաթօլիկներին, քանի որ այդ եկեղեցին շինուած է հայ-կաթօլիկների փողով:

Բարձրագոյն հրամանի որոշումները տակաւին չեն զործադրուած: Միայն յոյս կայ, որ շուտով բացուի թէ հոգևոր կառավարութիւնը և թէ դպրոցը: Դատապարտելի է մեր հոգևորականների միմեանց հետ անհաշուութիւնը. փոխանակ սիրով և համերաշխութեամբ գործ վարելու, մեր հոգևորականները միմեանց են պախարակում և չը կայ մէկը, որ մտածէ ընդհանուրի օգտին, աշխատէ ընդհանուրի համար:

Քանի որ լաւ ժամանակն է, մենք կը խնդրենք մեր չարգելի հոգևորականներից մի ժամանակ մոռանալ իրանց եսը և աշխատել գործի համար: Հարկաւոր է խնդրել և իմանալ ինչո՞ւ ուշացաւ մեր դպրոցի և հոգևոր կառավարութեան բացումը. ուրիշները իրանց կը հաշուեն անկարող, գոնէ ընտրեն իրանց միջից մէկը, որ առաջ տանէ գործը:

Մենք միշտ զանգատուած ենք, թէ չունենք կրթուած հոգևորականներ, չունենք դպրոց և մեր տղաները անկրօն են մեծանում: Բայց ծոյլ մարդը ի՞նչ կարող է ունենալ...

Բազմավէպ, լուսնիս Խմբադրական յօդուածը այս անգամ խօսում է այն հարցի մասին թէ պէ՞տք է արդեօք հասարակական ծառայութեան ասպարէզում սպասել գնահատութեան, վարձատրութեան: Մեղանում այս հարցը հիւանդոտ կերպարանք է ընդունել: Գործիչը

պիտի գնահատութիւն գտնէ, սա բնական է, անհրաժեշտ է, առանց սրան առաջադիմութեան գործը չէ կարող ապահովուած լինել: Բայց մեր մէջ հասկացողութիւնները շուտ շուտ են յեղաշրջուած, ուղանդակուած. ճիշտ այս դրութեան է մատնուած և գործիչի գնահատութեան հարցը: Գնահատել... բայց ո՞ւմ: Նրան, ի հարկէ, որ արժանի է, նրան, որ վաստակ, երախտիք ունի: Մինչդեռ մեղանում փառքի և արձանի աչք դրած է ամեն մի տափակութիւն, ամեն մի ոչնչութիւն: Մեծամտութիւնը այն աստիճան վարակել է մեր թշուկներին, որ նրանք ամեն մի քայլում դափնիներ են պահանջում: Այդ պատճառով էլ մեղանում կորցրել են իրանց նշանակութիւնը թէ՛ դափնիները, թէ՛ հասարակական ցոյցերը: Եւ ամենից ցաւալին այն է, որ մինչդեռ անշնորք միջակութիւնները դափնիներ են մուրում, իսկական փոքրաթիւ երախտաւորները մնում են մոռացութեան մէջ, չեն գնահատուում: Չը գնահատուած մնալու իրականութիւնը հին է մեղանում, պատմական մի ախտ. և եթէ նայենք պատմութեան էջերին, կը տեսնենք որ մեր լաւագոյն գործիչները ոչ միայն չեն գնահատուած, այլ և անարգութեան, թշնամութեան են եղել մատնուած: Ահա այս ազգային յատկութիւնը աչքի տալով բռնած՝ ճշգրտապէս չորհորում է որ իսկական, ազնիւ գործիչները աշխատեն առանց փառքի, խրախուսանքի ակնկալութեան: Մեր նոր սերունդը պէտք է արհամարհէ բռնի քաջակրօնները, պէտք է արհամարհէ նենգաւոր հարուածները և խայթոցները: Հասարակութեան օգտին, յառաջդիմութեան և վերակենդանութեան նուիրադրած ազնիւ և անձնանուէր գործիչը պէտք է չունի խրախուսանք, որոնք քնքուշ

զգումանք են անձին, Հասարակութեան համար կուտողը, եթէ պատերազմի մէջ փոխանակ բռնեցքներու, զնդակներու, սուրերու և սուրիններու հարուածներուն և խոցերուն կը սպասէ համբուրներու և փաղաքշական ջղեր թուլացնող զրուտութիւններու, մենք կը բռնեք, թէ այդ մարտիկը պատերազմի կոչում չունի, նա հասարակութեան գերութեան շղթան խորտակելու նպատակ չունի, այլ զարշ անձնական անսպարծութիւնն է իր ամբողջ մտածութիւնը, և է հասարակաց դործերէն՝ մենք դուրս քաշենք այդպիսի թեթեւ, հիանդ մտքերը, որոնք իրենց անձնասիրութիւնը կուտք կանգնած, կը ջանան երկրպագուներ որսալու, չէ՛, չխնկալկենք այդ վիշապներուն, որոշենք զուտ ազգասէրը խարդախ և փառամոլ անձնասէրէն, գետնաքարշ տապալենք մեր ներքին նախանձի հրէշը և աշխատինք սիրել և ճանչնալ ճշմարիտ անձնասուէր գործիչներու վաստակը, Յարգանք դէպի յարգելին՝ նուաստութիւն, խոնարհութիւն չէ, այլ ազնիւ կրթութիւն... ուսկից կը խորշին գոռոշները, անձնամոլ ցառազար մարդուկները, ճշմարտութիւնը աչսպէս միայն կարելի է պատմել:

Ամսագրի միա յօդուածներէց չինք մի փոքրիկ կենսագրական յօդուած, նուիրուած պ. Ղազարոս Սղաշեանցին նրա քառասունամեայ յօրեկեանի առիթով և «Հինէն—Նորէն» փոքրիկ, բայց սրամիտ յօդուածը Այս տարուայ սկզբում էլ միաձնի Ղազարապատում մեռաւ Յովսէփ ձանդիկեան, «Հնութիւնք Ակնայ գրքի հեղինակը և պատգամաւոր կաթողիկոսական վերջին ընտրութիւններէ ժամանակ: Մեռաւ այդ խեղճ, բազմատաղ մարդը մենակ ու անչափ, ինչպէս մի դժբախտ դարձր. նրա դիակը գերեզման տարան աղբի սայլով: Յի-

շատակելով այդ մահը, յօդուածագիրը անցնում է Ալինի անցեալին ու ներկային, փորձում է մի քանի անուններ բացատրել սանսկրիտի օգնութեամբ: Ակնը մէկն էր այն դժբախտ հայաբնակ տեղերից, որոնք քարոքանդ եղան 1895-1896-ի թիւրքական զազանութիւնների ժամանակ: Նրա հայ ժողովուրդը հարուստ բանաստեղծութիւններ ունի և յօդուածագիրը կարծում է թէ «հառնիկ, ուստի՞ կուգաս» հռչակաւոր երգը Ակնում պիտի լինի հիսուսած: Ի վերջոյ սանսկրիտի օգնութեամբ յօդուածագիրը բացատրում է մեր «Վարդավառ» բառը Մինչև այժմ ամենքը համոզուած էին, որ այդ բառը կազմուած է «վարդ» բառից: Մինչդեռ սանսկրիտներէն «վարդա» նշանակում է ջուր, իսկ «վառ» («վիռ» արմատ) նշանակում է սըրսկում: Եւ իրաւ, Վարդավառի տօներին մարդիկ միմեանց վրայ ջուր էին սրսկում:

Աւարտա, մարտ—ապրիլ: Էլ միաձնի պաշտօնական ամսագրի համար կազմուած նոր խմբագրութիւնը միայն չորս ամիս կեանք ունեցաւ.—արդէն յալտնի է, որ այս համարը վերջինն է, որ հրատարակում է նոր խմբագրութիւնը: Այսպէս են էլ միաձնի բաները: Այս անօրինակ սակաւակեցութիւնն էլ, ինչպէս ասում են շատերը, ունի իր պատմութիւնը. բայց մենք միայն երկու խօսք կ'առնենք նրա մասին: Նոր խմբագրութեան առջև դրուեցին զանազան արգելքներ. երբ էլ միաձինը կամենում է խանդարել, ամեն միջոցներ պատրաստ են նրա համար: Այդ արգելքներից զխաւորը, ինչպէս լսում ենք, այն է, որ «Սրբաբար» նոր խմբագրութեան թույլ չը տուին վարձատրել աշխատակիցներին, վարձատրել նոյն իսկ ոչ թէ փողով, այլ ար-

տատապուհներով, Շատ ընտրող է այս իրողութիւնը Մի վանք, որ ունի մեծ տպարան, կանգ է առնում այնպիսի մի, խակապէս չնչին, ծախսի առաջ, ինչպիսին է շարածից արտատպութիւն տալը։ Եւ սակայն այդ տպարանը կլանել է տասնեակ հազարներ և ոչ միայն կլանել է, այլ և կլանել է տուելու Վանքի այդ գրողանոց հաշիւները լաւնմուշ են թէ ինչ կարելի է սպասել նրա տպարանից։ Եւ խմբագրութեանը, ի հարկէ, մընում էր հրաժարուել ձեռքերը կապկապած աշխատելու պատուից։ Ներկայ միացած համարը արդէն նշաններ է ցոյց տալիս, որ էջ-իրածնի ամսագիրը կարող էր և առաջադիմել, անցեալի հետ համեմատած։ Ուշադրութեան արժանի է, իբրեւ անակնկալ նորութիւն, Վերական Վանդադրութիւն Հայաստանեայց Առաքելական ս. Եկեղեցու ծրագիրը, ինչպէս նաեւ մի քանի պատմական և լեզուագիտական յօդուածներ, մանաւանդ մատենախօսական բաժինը։ Այս, էջ-միածնում էլ կարելի է գործ կատարել, թէ և փոքրիկ ու համեստ գործ։ Բայց զժգարտութիւնն այն է, որ այնտեղ ամեն մի նոր բան ծնում է իսկոյն մեռնելու համար... Դեռ կնունքը չը կատարած թաղման հանդէսն է բոլորում։

—

Լուսնայ, մայիս—յունիս։ Անցեալներում մենք անուանել էինք Գիւտ քահանայ Աղանեանցի այս հանդէսը տէրտէրական — հղերական։ Այս անունը վրդովմունք էր պատճառել հանդէսին, շտապեց, վիրաւորուածի ձեռով, անուանել մեր տուած անունը անմիտ։ Մենք պատասխանեցինք, որ «Լուսնային» այդպիսի անուն տալով, նկատի չենք ունեցել, որ նրա տէրը մի տէրտէր է, այլ այն ուղղութիւնը, որին հետևում է հանդէսը և բերել էինք փաստեր. յօդուած Մայր-

Մաշտոցի տպագրութեան մասին, մի այլ զրուածք եկեղեցական ժողովների մասին։ Այժմ «Լուսնայ», տէրտէրական հանդէսին յատուկ բարեխղճութեամբ, զեկուցանում է իր ընթերցողներին թէ «Մուրճը» Մայր-Մաշտոցի տպագրութեան դէմ է, ապա գալիս է մեզ խնդրելու, որ ցոյց տանք իրան թէ եթէ աւելորդ է Մայր-Մաշտոցի տպագրութիւնը, հապա ի՞նչ բան ենք մենք կարեւոր համարում հայ եկեղեցու զոյութեան համար։ Ծայտնում ենք Գիւտ քահանայ Աղանեանցին, որ Մայր-Մաշտոցի տպագրութեան դէմ մենք ոչինչ չենք ասել։ Մենք միայն յիշել ենք նրան իբրեւ փաստ, որ «Լուսնայ» այդպիսի յօդուած տպելով ցոյց է տալիս իր ուղղութիւնը Հանդէսը, ի հարկէ, իրաւունք ունի տպել յօդուածներ ոչ միայն Մայր-Մաշտոցի, այլ և ծամադրքի, ձառոցի, Շարականի, Նարեկի, Յայրմատուրքի մասին էլ։ Իրաւունք ունի, որովհետեւ տէրտէրական—կղերական հանդէս է։ Մենք միայն այդ էինք ուղում սպացուցանել և ասացէ՛ք, մի՞թէ այնքան վիրաւորական է մի տէրտէրի համար, եթէ նրան ասեն թէ տէրտէրական հանդէս է հրատարակում ինչպէս է, որ Գիւտ քահանան չէ սարսափում իր այդ վրդովմունքից։ Այժմ որ «տէրտէրական» կոչումից դուրս գալով, «Լուսնայ» պէտք է զառնայ նոյնպիսի «կարմիր», ինչպիսին է Քաղմովէպը։ Իսկ թէ ինչքան սոսկալի բան է կարմիր լինելը, այդ արդէն Աղանեանց քահանայն ցոյց է տուել նոյն այս համարում, խօսելով Քաղմովէպի մասին։ Գալով այն հարցին, թէ ի՞նչ կը կամենայինք մենք տալ Մայր-Մաշտոցի փոխարէն, պատասխանում ենք Գիւտ քահանային, որ կարօտութիւն չունենք նրա տուած հարցերին և այն, ինչ հարկաւոր ենք համարում ասել, կ'ասենք ա-

աանց նրա տէրտէրական հանդէսից թողաւ թիւն ստանալու Մի վերջին խօսք էլ Եթէ կամենում էք, որ ձեզ հետ հնարաւոր լինի որակէ հարցի մասին խօսելու, բանակաւ մղելու, եղէք շիտակ, լա հասկացէք ձեր կարգացածը, եղէք վաւերույ և օրինաւոր Ծամածոութիւններ առանց ալն էլ շատ կան. և տէրտէրական հանդէսը չըպիտի մեղ զարմացնէ ծամածոութիւններով, լեղաշըջմաներով, փարիսեցիական վալնասուններով Մենք ալլ ևս ոչ մի ցանկութիւն չունենք խօսելու այս առիթով Աղանեանց քահանայի հետ:

„Кавказский Вѣстник“, յուլիս. վերջին ժամանակներս Քիֆիսի առաւմաստաղի Յունիսի հարօրինակ ճակատագրի Յունիսի համարում խմբագրութիւնը խնդրում էր նոր ձեռագիրներ չուղարկել մինչև առանձին յայտարարութիւն ալլ մասին. իսկ յուլիսի համարը բոլորովին չունի ամսագրին յատուկ բաժինները. ոչ ներքին, ոչ արտաքին տեսութիւն, ոչ մատենախօսութիւն—մի խօսքով ոչինչ բան, որ կապէր նրան ընթացիկ կեանքի հետ Այդ համարը մի ժողովածու

է, բաղկացած վէպերից և մի երկու յօդուածից, որոնք կարող են տըլուած լինել ամեն ժամանակի Գ. Իւրի Վեսելովսկի ունի այս համարում „Յօրնէլ և Հայերը“ վերնագրով մի յօդուած: Յօրնէլը, XVII դարի Քրանսիական հռչակաւոր դրամատուրգը, ինչպէս յայտնի է, ունի տրագեդիաներ, որոնք վերցրած են հին հայոց կեանքից: Դրանցից մէկը „Պօլիվկտոս, վկայ հակադէմ“, թարգմանուած և տըլուած է Վենետիկում: Պ. Վեսելովսկի պատմում է թէ այդ և թէ Յօրնէլի երկու ուրիշ պիեսների բովանդակութիւնը և վերջում խորհուրդ է տալիս թարգմանել և ալլ երկու չը թարգմանուած տրագեդիաները („Նիկոմեդ“ և „Սուրէն“), որոնց մէջ դուրս են բերուած մի հայ թագուհի և մի հայ թագաւորի աղջիկ: Թարգմանելով դրանց, „Լաւագոյն հայ դերասանուհիներին—ասում է պ. Վեսելովսկի—հնարաւորութիւն կը տրուէր մօցնել իրանց բեպերտուարի մէջ I—II դարերի (Ք. ա.) երկու հայ իշխող և հմալող հայ աղջիկների դերերը, որոնց պատկերները ալլալիսի հմտութեամբ ստեղծել է Յօրնէլի վեհ հանճարը“:

